Ցարևմտեան հարաւոյ կից այսը վանաց է մեծագիր այգի, յորմէ քամեն զառատ և զաղնիւ գինի ի սնունդ միաբանից, ունի նոյնպէս շահաստան կալուածս, զորս տայ կապալաւ։ Սպասք խորանին սրբութեան թանգագին են՝ ըստ մեծի մասին ընծայեալք յիշխանաց Հայոց ընակելոց ի Հաշտարխան։

«Մենաստանս այս այժմ կայ յաւերակ դրութեան, ապաստանեալ միայն ի խնամս միոյ ծառայի, որ ածէ զաւել և վառէ զճրագ։ Ցաւալի դրութիւն ողորմելի մենաստանիս ի սուգ և յողբ շարժէ զամենայն այցելուս, բայց գուցէ զթացեալ Աստուծոյ դարձուցէ զսա ի շքեղ փառս իւր առաջինս։ Արդ վասն անկորուստ մնալոյ հարուստ կալուածոցն սորին զարձանագրութիւնս և զանուանս նոցին եղից աստանօր, հանեալ ի զանազան մատենից։

«Արձանագրութիւն այսր վանիցս ի ճակատ սեղանոյն՝

«Ես Մեղապարտս 'ի ծնունդս եկեղեցւոյ Կիրակոս վարդապետ ընիկ յերկրէն Աղուանից... շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ ետու շինել զեկեղեցիս վայելչակերտ, յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկային 'ի ռճՂ. (1741) թվին, յառաջնորդութեան սուրբ Էջմիածնի տեառն Յակոբայ և 'ի կաթուղիկոսութեան սուրբ Գանձասարայ տեառն Պետրոսի, զոր և աղերսեմ զՀանդիպողդ յիշել զՏէր Ղազարն հոգաբարձու վանիցս և զամենայն աշխատաւորս սորին, որք յիշեն, յիշեալ լիցին առաջի Աստուծոյ»։

«Նորոգեցաւ հիւսիսային կողմն տաճարիս հանդերձ գլխի սալիւքն, աշխատանօք առաջնորդական վարդապետի [1]) և ռ. լիսր կիրն կամ ահակի փո-

[1]) Պէտքէ լինի „Առաջնորդ Ոսկան վարդապետի“ տես վերև։